ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 03.12.2018թ. N 389/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Խաչատրյանը, Հ.Նաջարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Աճուրդի ամփոփման արդյունքների մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ավետիսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Տերյան 19-4)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Պլանավորված առավելագույն գինը ՀՀ դրամ
		«Այյունեթվորքս» ՍՊԸ	
1	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի և նրա ենթահամակարգերի) սպասարկման ծառայություններ	258 767 500	**235 000 000**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. ՊԵԿ-ԷԱԾԾՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ամփոփման արդյունքները, արձանագրեց, որ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը /310 521 000 ՀՀ դրամ/ գերազանցում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված առավելագույն գինը /235 000 000 000/ ՀՀ դրամը:
2. ՊԵԿ-ԷԱԾԾՁԲ-19/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյան

Անդամներ՝ Ա.Խաչատրյան

Հ.Նաջարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան